

**ՍՅՈՒՆԵՑԻ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐՆ ԻՐԵՆՑ ԱՄԱՌԱՅԻՆ ՀԱՆԳԻՍՏՆ ԱՆՑԿԱՑՆՈՒՄ  
ԵՆ ՀԱՆՔԱՎԱՆՈՒՄ**

14.07.2015թ.

ՀՀ կառավարության նախաձեռնությամբ իրականացվող «Դպրոցականների ամառային հանգստի կազմակերպում» ծրագրի շրջանակներում ՀՀ Սյունիքի մարզի ծնողազուրկ, սոցիալապես անապահով, բազմազավակ, Արցախյան պատերազմի վետերանների ընտանիքների 7-13 տարեկան երեխաներն իրենց ամառային հանգիստն անցկացնում են Հանքավանի «Հասմիկ» և «Լուսաբաց» ճամբարներում:

Այս տարի Սյունիքից ճամբար կմեկնեն 195 դպրոցականներ: Ճամբարն անցկացվում է երեք հերթափոխով, 20-ական օրով: Հուլիսի 8-ին ճամբար մեկնեցին երկրորդ հերթափոխի 55 երեխաներ: Առաջին հերթափոխի 70 մասնակիցները ճամբար են մեկնել հունիսի 29-ին, իսկ երրորդ հերթափոխի թվով 70 դպրոցականներ Հանքավան կմեկնեն հուլիսի 27-ին: Ճամբարականների հանգիստը կավարտվի օգոստոսի 15-ին: Երեխաների տեղափոխությունը կազմակերպել են քաղաքապետարանները: Ճամբար մեկնող երեխաներին տեղափոխող տրանսպորտային միջոցներին ուղեկցում են ճանապարհային ոստիկանության մարզային աշխատակիցները, ինչպես նաև մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պատասխանատուն: